

ԴԵՊՈ ԿՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 5

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ
ԱՌԱԶԱՐԿՆԵՐ**

- Ե -

Մ Շ Ա Կ Ո Յ Թ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄՈՆՈՐԷԱԿ
1999

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

- Ե -

Մ Շ Ա Կ Ո Յ Թ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄՈՆՈՐԷԱԿ
1999

**ՓՈԽԱՆ ՆԱԽԱԲԱՆԻ՝
ՆԱՄԱԿ ԳԱԳԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ**

Պրն. Գագիկ Յարութիւնեան
Նախագահի Հայաստանի Հանրապետութեան
Սահմանադրական Դատարանի
Երևան

Ողջոյն:

Շուտով երեք տարի պիտի ըլլայ յաջորդող Էջերով նշուող ձեր հարցարանը ստանալէս ի վեր և այս ժամանակաշրջանին ձեր ալ պաշտօնը փոխուած ըլլալով՝ հաւանաբար ձեր հետաքրքրութիւնը ևս նուազած է արծարծուող նիւթին հանդէպ: Բայց և այնպէս, պատրաստ է յանձն առած ուսումնասիրութիւնս, և զայն ձեզի կը յղեմ յուսալով որ վերջին եօթը տարիներու ընթացքին Հայաստանի պետական շրջանակին մէջ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆՕՐԷՆ մտածող միտքեր յայտնաբերուած են, և թէ այս հարցն ու գործը կը բերէք անոնց ուշադրութեան:

Ուշադիր վերլուծումը ձեր հարցարանին կը յանգեցնէ հետևեալ մտածումին.---

Հիմնականին մէջ ի՞նչ է հարցը: Գիտնալ կ'ուզուի թէ երրորդ հազարամեակին սփիւռքահայերը մասնաւորապէս և հայերը ընդհանրապէս ի՞նչպէս պիտի փոխադարձաբար յարաբերին ու ապրին իրարու հետ:

Պիտի պահպանե՞ն արդեօք անոնք իրենց կապը իրենց ազգային խարիսխներուն հետ, թէ՞ պիտի բաժնուին անոնցմէ:

Պիտի գոյացնե՞ն իրենց բնական երկիրներու պետութիւններէն անջատուած ազգային միաւորներ:

Պիտի ստեղծե՞ն նո՛ր արժէքներով և նո՛ր միասնութիւններով նոր խմբաւորումներ:

Պիտի հնարե՞ն ազգային արժէքներու նոր չափանիշներ, որոնց շուրջը խմբուին իրենք և հայութիւնն առհասարակ:

Այս հարցադրումներուն պատասխանելու համար, երեք տեսակի մտածողներ կրնամ պատկերացնել.–

ա.– Համայնավարութիւնը կը քարոզէր թէ ազգ և կրօնք բարբարոս և յետամնաց միջնադարի մը անհետացման դատապարտուած գաղափարներն են:

բ.– Տնտեսութեան համաշխարհայնացումը ցանկացող և զայն քարոզող երկրագույններ, իրենց հերթին, կը յայտարարեն թէ ազգային պատկանելութեան և ազգային ինքնավարութեան գաղափարներ դատապարտուած են անհետանալու:

գ.– Աւանդական մտածողութեան հետևորդներ կը պահպանեն իրենց այն համոզումը՝ թէ ազգ և կրօնք հիմնական և մնայուն գործոններն են որևէ ազգային ինքնութեան համար, և թէ բոլոր մնացեալ «ութիւն»ները հետևանք են առաջին երկուքին ու դատապարտուած են անհետանալու:

Այս երեք խմբաւորումներուն անդրադառնալ անհրաժեշտ էր հոս՝ շեշտելու համար որ ցուրտ պատերազմին ւարտով և 1989-ին Պերլինի պատին քանդումով տնտեսականութիւնը եղած է գլխաւոր մղիչ ուժ մը և համաշխարհայնացումի (globalization) հովերը հաւանաբար ստեղծեն նոր տիպի մարդ, փիլիսոփայութիւն և բարքեր, որոնց մասին բաւարար պատկերացում չունինք ներկայիս: Ձեր հարցարանը, ուզենք թէ ոչ, կը վերաբերի նաև այս հովերուն:

Ես կը պատկանիմ վերը նշուած երրորդ խումբին: Կը գտնեմ թէ ազգ կը նշանակէ ժողովուրդ մը, որ համախմբուած է ցեղի մը, լեզուի մը, կրօնքի մը և հողատարածքի մը շուրջ: Ասոնց գումարը կը համապատասխանէ ՄՇԱԿՈՅԹԻ:

Պատմական առումով, երբ ինծի պէս մտածողներ խօսին ազգի մը մասին, կ'ակնարկեն անոր մշակոյթին:

Այս հաստատումը, յուսամ, լուսաբանած կ'ըլլայ թէ ինչո՞ւ այս ուսումնասիրութիւնը կոչած եմ ՄՇԱԿՈՅԹ:

Ընտանիք-դպրոց-ազգ երրորդութիւնը ապրեցնելու միջոցը, իմ կարծիքով, պէտք է փնտռել համահայկական մշակոյթի մը մէջ: Ես այս կէտով ալ պիտի աւարտին հասցնեմ նամակս, առաջարկելով որ ուսումնասիրութեան ընդմէջէն ծանօթանաք Սփիւռքի իրավիճակին:

Ձեր վեց հարցերուն անմիջական պատասխանները փորձած եմ տալ եզրակացութեան բաժնին մէջ, որ կը յաջորդէ մեր այժմու ընդհանուր կացութիւնը ներկայացնող հատուածին:

Բարի ընթերցում:

Ձեր տպատրութիւններուն մասին կարդալու յոյսով,

ՄԿՐՏԻՉ ՄԱՂԽԱՍԵԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1995 տարեշրջանին Հայաստան մեր այցելություններին մեկուն ընթացքին, օրուան Փոխ-Նախագահ Գագիկ Յարությունեանը մեզի տուաւ ստորև ներկայացուող հարցարանը, խնդրելով որ մեր կարողութեան ներած չսփով ուսումնասիրութիւն մը պատրաստենք այդ մասին:

Ահա՛ւասիկ այդ հարցարանը.---

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌՔ ՓՈԽԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԵՐ

1. Հայաստանում ստեղծուած կացութիւնը անկախութիւնից յետոյ, ընդհանուր հայկական առումով:

2. Նոր իրականութիւնը և նոր կացութիւնը սփիւռքում.

ա.-- Ընդհանուր նոր մտածողութիւնը սփիւռքում.

բ.-- Առանձնապատուկ իրավիճակները տարբեր գաղութներում և ըստ տարբեր կառոյցների:

3. Հայաստանի պետութեան դերն ու դերակատարութիւնը սփիւռքի հարցում:

4. Սփիւռքի դերը ազգապահպանման և ազգային պետութեան գոյացման ու զօրացման գործում:

5. Հայաստան-սփիւռք յարաբերութիւնների արդի վիճակի գնահատումը:

6. Հայաստան-սփիւռք յարաբերութիւնների ցանկալի վիճակը. դրան հասնելու նպատակները, խնդիրները, միջոցները, մեխանիզմները:

Վերոնշեալները, առաջին ակնարկով, ունին երևոյթը վեց սովորական հարցումներու, բայց խորքին մէջ այս սերմերէն կրնայ ծնունդ առնել համապարփակ գործակցութեան ծրագիր մը, և պիտի ուզե՛նք որ ծնունդ առնէ բաղձալի համապարփակ գործակցութիւնը հայրենիքի և աշխարհացրի հայութեան միջև:

Նկատի առնելով նիւթին լրջութիւնը, որոշեցինք կեանքի կոչել 1985-ին Մալխասեան Հիմնարկութեան համար մեր պատրաստած «Մշակոյթ» ուսումնասիրութիւնը:

Թէև հայ ազգային միջավայրը կարևոր և բազմաթիւ փոփոխութիւններ կրեց վերջին տասնամեակին, սակայն և այնպէս ուսումնասիրութիւնը կը մնայ այժմէական և օգտակար՝ մեր խորին համոզումով, մա՛նաւանդ որ տակաւին իրենց արմատական լուծումին կը սպասեն հոն արծարծուած շատ հարցեր:

Նիւթը պետութեան և հանրութեան ուշադրութեան բերելու մեր որոշումին մէջ իր դերը ունեցաւ նաև մեր «Թուաքանակ» ուսումնասիրութեանէն բխող եզրայանգումը, որ մեզ կը զգուշացնէ թէ՛ եթէ մինչև 2025 թուական հիմնական փոփոխութիւն չմտածուի մեր ազգային պատկանելութեան ըմբռնողութեան մէջ, մեր յաջորդ սերունդը կորսնցուցած պիտի ըլլայ սփիւռքի հայութեան 90 տոկոսը, և, հետևաբար, իննսուն տոկոսով կոտորակուած պիտի ըլլան հայրենիք-սփիւռք փոխադարձ կապերը:

Անկախաբար այն արդիւնքէն, որ բաժինը պիտի ըլլայ հրատարակութեան տրուող այս հետազոտութեան, մա՛նաւանդ երբ պաշտօնակալներ կը փոխուին և նոր պաշտօնակալներու հետ կը փոխուին նաև հետաքրքրութիւններ, կ'ուզենք կատարած ըլլալ մեր խոստումը՝ տրուած Պրն. Գազիկ Յարութիւնեանին, որ ներկայիս կը վարէ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարանի նախագահի պաշտօնը:

Կը փափաքինք, անշուշտ, որ Հայաստանի համապատասխան մարմինները իրենց ուշադրութեան առարկան դարձնեն հոս տրուող նիւթը, և կը յուսանք որ գէթ ազգային ռազմավարական ծրագրումով զբաղող հիմնարկներ օգուտ քաղեն անկէ:

Վերը մէջբերուած հարցերը կարելի է ընդհանուր առմամբ բաժնել երկու խումբի, - քաղաքական ու մշակութային, - և ըստ այնմ քննել զանոնք:

Եթէ փորձենք յարաբերաբար լայն հորիզոնով մօտենալ հարցերուն՝ մեր առաջարկած համահայկական կրթութեան արդիւնք եղող մտածելակերպով մը, անմիջապէս կ'անդրադառնանք թէ մեզի կը պակսին այն տասը տարրական տիեանփք ուժերը, որոնք հասարակաց մտածումի գետին և, հետևաբար, ազգի մը կամ մշակոյթի մը պատկանելութեան զգացումի պահանջք կը ստեղծեն անհատի մը մօտ, որով և կը դժուարանայ վերլուծումը ներկայացող վեց հարցերուն:

Տասը տարրական տիեանփք ուժերէն - 1) թուաքանակային, 2) ֆինանսական, 3) տնտեսական, 4) քաղաքական, 5) կրթական, 6) մշակութային, 7) ընկերային, 8) գիտաթեքնոլոգիք, 9) զինուորական, 10) կրօնական - առաջին չորսը ունին «քաղաքական բնոյթ» սփիւռքահայու մտածողութեամբ, իսկ վեցը կը զգենուն «մշակութային բնոյթ»:

1963-ի Փետրուարին մեր առաջին այցելութենէն ի վեր՝

կանոնատր կապ հաստատած ենք Հայաստանի հետ և մեր Յ4 տարիներու փորձառությունը մեզի ցոյց տուած է թէ ազգային պատկանելութեան զգացումը (sense of belonging) իրարմէ տարբեր դրսևորումներ ունի հայրենաբնակին, սփիւռքահայուն և «ներքին սփիւռք»ի բնակիչին մօտ: Կը հետևի թէ հարցերուն պատասխան որոնելու ժամանակ, հարկ է յատկացնել չափանիշ մը: Բացի այդ, հարկ է ճշդել թէ հարցարանը կը վերաբերի արտաքի՞ն սփիւռքին, «ներքին սփիւռքին», թէ՞ երկուքին ալ:

Որքան խորանանք նիւթին մէջ, այնքան աւելի կը համոզուինք թէ պատասխան գտնելու համար անհրաժեշտ է՝

ա.- Որդեգրել ԾԱՆԻՐ ԶՔԵԶ նշանաբանն ու երթալ մինչև ակունքները նիւթին.

բ.- Ծանշնալ մշակոյթը, որ ունեցած ենք, ունինք, և կ'ուզենք ունենալ:

Այս երկու նախաբայերը մեզի կրնան տալ առաւելութիւնը աշխարհատարած շահագրգիռ հայորդիներու հետ նոյնալիք մտածողութեան մը, որուն բացակայութիւնը իր շուքը կը ցցէր նոյնիսկ այն պահուն, երբ մեզի կը տրուէր հարցարանը:

Յիրաւի, Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը Հ.Հ.Ծ.ի համագումարին ելոյթ ունենալով, մէկ կողմէ կ'ըսէր թէ սփիւռքի յարաբերութիւնները Հայաստանի հետ երբեք այնքան ջերմ չէին եղած որքան են ներկայիս, իսկ միւս կողմէ կ'աւելցնէր թէ հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները հաւանաբար կ'արգելակուէին սփիւռքի տեսակէտը արտայայտող մարմնի կամ կազմակերպութեան մը բացակայութեան հետևանքով, որով և կը նշէր թէ նման կառոյցի մը հաստատումը ժամանակի հարց է միայն:

1997-ի Մայիսին «Հայաստան-սփիւռք յարաբերութիւններու համակարգման պետական խորհուրդ» ստեղծելու նախագահական հրամանագիրը լուծած կ'ըլլայ այդ «ժամանակի հարց»ը:

Կը հասնինք, հիմնական խնդրին.- ՀԱՅՐԵՆԻՔ_ՍՓԻՒՌ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ և, առ այդ, ԿԱՌՈՅՑ:

Կարելի պիտի ըլլայ հետևցնել թէ կառոյցներու և դրութիւններու (սիւթեմներու) ապաւինելու երևոյթը պիտի պարզուի կրկին անգամ՝ լուծելու համար այնպիսի կնճոռոտ հարց մը, որպիսին է սփիւռք-հայրենիք յարաբերութիւններու խնդիրը, մինչ, օրինակ, ցեղասպանութեան խնդրին նկատմամբ պետութիւնը ունի ըմբռնողութիւն մը, որ տարբեր է սփիւռքահայ կազմակերպութիւններու ըմբռնողութենէն, թող որ այդ կազմակերպութիւններն ու անոնց հետևորդները ևս ունին իրենց իրայատուկ ըմբռնումները այդ

հարցին մասին, ինչպես որ հայրենաբնակ և «ներքին սփիւոքի» զանազան խաւեր ունին այլակերպ ըմբռնումներ:

Ուրեմն լուծումը պէտք է գայ գաղափարներու աշխարհէն, տեսիլք ու թոհչք ունեցող առաջնորդներէ, և ո՛չ թէ կառոյցներէ: Առաջնորդներէ, որոնք կարենան ուղղութիւն տալ հանրային կարծիքին և ստեղծեն համահայկական հասարակաց մտածողութիւն՝ ազգային հիմնահարցերու կապակցութեամբ:

Հասնելու համար հոն, հարկ է աշքի առջև բերել հայութեան պատկերը ներկայ հանգրուանին:

Մենք կը տեսնենք երեք գլխաւոր տեսակի հայեր.–

1- **Երազապաշտներ** – որ կրնան ըլլալ 95 տոկոս վերացական և 5 տոկոս գործնական.

2- **Իրապաշտներ** – որ կրնան ըլլալ 95 տոկոս ժխտական և 5 տոկոս դրական.

3- **Գաղափարապաշտներ** – որ կրնան ըլլալ թէ՛ վերացական, թէ՛ գործնական, թէ՛ ժխտական և թէ՛ դրական. սակայն միշտ 100 տոկոս նուիրուած ու ապագայ կերտող:

Երազապաշտը սփիւոքահայն է, որ տարիներու ընթացքին իր կերտած մտապատկերով տակաւին կ'որոնէ կատարեալ հայն ու Հայաստանը:

Իրապաշտը մէկ մասն է հայրենաբնակ հայութեան, որ այլևս ո՛չ մէկ բանի վրայ վստահութիւն ունի և հաւատք:

Գաղափարապաշտը այն արցախցին ու հայաստանաբնակն է, որ տեսած է լաւն ու վատը, մասնակից դարձած է պատերազմին, և համոզուած է թէ կրնայ յաղթահարել ամէն կարգի դժուարութիւն՝ ինչպէս յաղթանակած է ռազմի դաշտին վրայ թշնամիին:

Արդ, եթէ նկատի առնենք որ մեր դիմագրաւելիք հարցը այս երեք խմբաւորումները իրարու մօտեցնել, երեքին ալ զօրակցութիւնը ապահովել, միասնական ջանքերով ազգային նպատակներ իրագործել և այդպիսով փափաքելի արդիւնքներ նուաճելն է՝ ուրեմն կը պարտինք որդեգրել որոշ ծրագրումի եղանակ և մօտեցում:

Նման պարագայի մը, առաջին քայլը պիտի ըլլայ ընդունիլ երեք խմբաւորումներուն գոյութիւնը և զանոնք ճանշնալ հանգամանօրէն:

Յաջորդ քայլը պիտի ըլլայ ընտրութիւնը թիրախներու, պարզումը նպատակներու և ճշդումը ակնկալուող արդիւնքներու:

Երրորդ, պէտք պիտի ըլլայ որդեգրել ժամանակացոյց մը՝ ճշգրիտ ժամկէտներով, որոնք հետևողականօրէն յարգուին:

Չորրորդ և վերջին՝ անհրաժեշտ պիտի ըլլայ ճիշդ անձը դնել ճիշդ գործին գլուխը՝ արդիւնքներ պահանջելով անկէ:

Այս բոլորէն անկախ և նոյն ատեն այս բոլորին զուգահեռ, կայ անհրաժեշտութիւնը կազմակերպութեան՝ անհատական ցրուած ուժերու համախմբման համար: «Ազգերի գոյութեան առաջին պայմանն է իր համախմբման կազմակերպումը և յետոյ միայն ազգային այլ արժէքները և նուաճումները – մշակոյթ, առևտուր, ճարտարարուեստ, ուսում ևլն: Գաղափարը, լուսաւորութիւնը, ընդունակութիւնները թանկագին արժէքներ են այն ատեն միայն, երբ կամք կայ անոնք արժեցնելու, հակառակ պարագային այդ արժէքները ոչինչ են»:

«Այո՛, ապրելու համար կամքը և կազմակերպումը աւելի գերադաս են քան իմաստութիւնը և ընդունակութիւնները. այս վերջինները անհրաժեշտ լրացուցիչներ են, այլ ոչ թէ հիմնաքար գոյութեան:

«Ժողովուրդի մը գոյութեան և միութեան հիմը իր կազմակերպութիւնն է» (ՌՌԻԲԷՆ):

Վերոյիշեալ չորս քայլերը առնելով և կազմակերպութեան կառոյցները հիմնելով բացաժ կ'ըլլանք ճամբան՝ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ ԱՐԴԻԻՆԱԻԷՏՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԸ ՀԱՅ ՊԱՀԵԼՈՒ ՄԵՐ ԵՐԱԶԻՆ ՈՒՐ ՈՐ ԱԼ ԳՏՆՈՒԻ ԱՆ:

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

I- ՄՈՒՏՔ

ՁՈՒՂՈՒՄ-ը սփիւքի և ամբողջ արտասահմանի գլխաւոր խնդիրն է: Ու եթէ ան «Անցումն է մշակոյթէ մը ուրիշ մշակոյթի մը»՝ կենսակա՛ն է որ ՄՇԱԿՈՅԹ-ը ուսումնասիրուի խորապէս, ճանչցուի ամբողջականօրէն՝ որպէսզի կարենանք լասագոյնս պայքարիլ ձուլումին դէմ:

Թէև արդիւնք ու բերք՝ Մշակոյթը նաև այն վերին սնունդն է, որմով ԿՄՊՐԻ, և ո՛չ թէ պարզապէս կը գոյատևէ ժողովուրդ մը: Մշակոյթը գործ ունի մարդկային իմացականութեան ու հոգիին հետ:

Ա.- ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ա.- Ծառեր ՄՇԱԿՈՅԹ և ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ հասկացողութիւնները կը նկատեն համանիշ, և մասնաւոր զանազանութիւն մը չեն դնէր անոնց միջև:

Այսպէս մտածողներուն համար ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ (կամ «Մշակոյթ») կը նշանակէ,- «Միայն մարդ-արարածին յատուկ արտայայտութիւն մը, և այդ արտայայտութեան բաղկացուցիչ տարրերը,- լեզուներ, գաղափարներ, հաւատալիքներ, կրօնքներ, ծէսեր, օրէնքներ, արուեստի գործեր, շինութիւններ, հաստատութիւններ, թեքնիքներ, գործիքներ, կենցաղի ձևեր, ընկերային իրագործումներ, և այլն»: Այլ խօսքով՝ «Քաղաքակրթութիւնը (մշակոյթը) ամբողջութիւնն է այն յատկանիշներուն, որոնք արտայայտութիւն կը գտնեն յառաջդիմած ժողովուրդներու կեանքին մէջ»:

բ.- Ըստ կարգ մը ուրիշ ուսումնագէտներու՝ Քաղաքակրթութիւնը «ամբողջութիւնն է մարդկային ընկերային ժառանգութեան», իսկ Մշակոյթը «առաւելաբար քաղաքակրթութեան իմացական-արուեստային մասն է»:

Բ.- ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրնայ պատահիլ որ մշակոյթը, մշակոյթի միջոցները և մշակոյթի արտայայտութիւնները նոյնանան միտքերու մէջ, ու տեղի տան ընդհանուր շփոթութեան: Օրինակ, մամուլը մշակոյթ է,

մշակույթի միջոց է, թե՛ մշակույթի արտայայտություն: Կամ՝ ուսումնական հաստատությունէ մը ստացուած վկայականն է մշակույթը, այդ վկայականով խորհրդանշուող ուսումն է, թե՛ այդ ուսումին արդիւնքը եղող հայեցակերպերն ու կենսաձևերն են:՝

Մեզի՝ հայերու համար, սփիւռքի մէջ յատկապէս, «ՄՇԱԿՈՅԹ» բառը առաւելաբար նշանակած է քաղաքակրթութեան իմացական-արուեստային մասը: Արդարև, մեզմէ՝ որպէս ժողովուրդ, յաճախ խլուած է քաղաքակրթութեան միւս մարզերը մշակելու և զարգացնելու պատենհունը՝ մեզի ձգելով միայն մշակութայինը, և մշակույթէն՝ գլխաւորաբար լեզուական-գրականը:

Մշակույթի խմբաւորումներ

Կարելի է հետևեալ խմբաւորումները նկատի ունենալ մշակույթի կապակցութեամբ.

1.- **Արուեստի գործերը,**- գրականութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, արձանագործութիւն, պար, շարժանկար, ևայլն:

2.- **Ուսումնագիտական երկերը,**- փիլիսոփայութիւն, պատմաբանութիւն, հոգեբանութիւն, տրամախոհութիւն, լեզուաբանութիւն, ևայլն:

3.- **Մշակութային (իմացական-արուեստային) գործունէութիւններն ու արտայայտութիւնները,**- դասախօսութիւններ, հանդիսութիւններ, բեմ, նուագահանդէսներ, ցուցասրահներ, երգահանդէսներ, թանգարաններ, ևայլն:

Գ.- ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԳ

Մշակույթի ատակութիւնը թէև ժառանգական, Մշակույթը, սակայն, «ստացական» է որպէս ընկերային արտայայտութիւն. սերտօրէն առընչուած է ան անհատներու դաստիարակութեան, վարժութիւններուն, կեանքի պայմաններուն, շրջապատին և հաւաքական փորձառութիւններուն հետ:


1 Գիրերու գիտէն առաջ, մարդկային իմացական մշակույթը բանաւոր էր ու կը փոխանցուէր բերանացի: Գիրերու գիտէն ետք, իմացական մշակույթը գտաւ արտայայտութեան իր մնայուն ձևը, ու կրցաւ խորանալ ու ճոխանալ: Գիրքը գրաւեց դիրք մը, որուն կարևորութիւնը պիտի մեծնար անընդհատ շնորհիւ տպագրութեան գիտին: Գիրքէն ետք մամուլը (թերթը) պիտի գար որպէս մշակույթի ժողովրդականացումի միջոց, և պիտի անելնար թիւն ու ազդեցութիւնը գրողներուն և մշակույթի գործիչներուն: Իսկ այն յեղաշրջումը, որ տեղի ունենալու վրայ է էլէքտրոնիք գործիքներուն, համակարգիչներուն և վիտէօներուն գիտին հետևանքով՝ պիտի անշուշտ նսեմացնէ դերը գիրերու և տպագրութեան գիտերուն:

Կրթությունը,- ըլլա՛յ ուսումնական թէ ընկերային,- խա-
րխիսներէն մէկն է, որուն վրայ կը կանգնի Մշակոյթը:

Ժողովուրդի մը ղեկավարութեան ԱՌԱՋԻՆ մտահոգութիւնը
պէտք է ըլլայ ժողովուրդին դաստիարակութիւնը՝ ՄՇԱԿՈՑԹԻ՝
ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ: Ուսումը չի՛ բաւեր. ուսումէն ԱՆԴԻՆ բան մըն է
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ:

«Մշակոյթ ունի» կ'ըսենք այն ժողովուրդին համար, որուն ան-
դամներուն նկատաւելի մէկ մասը ՄՇԱԿՈՑԹԸ Կ'ԱՊՐԻ՝, ՄՇԱԿՈՑ-
ԹԻՆ ՄԷՋ Կ'ԱՊՐԻ:

«Նկատաւելի» ածականը առաձգական է որպէս հասկա-
ցողութիւն: Ծօշափելի իմաստ մը տալու համար անոր՝ զայն ներ-
կայացնենք պատկերով մը:¹



1 Այս գծապատկերը հիմնուած է մօտաւոր գնահատումի մը վրայ:

ԿԵԴՐՈՆԻ ԿԷՏԸ, մէկ տասը-հազարերորդը ամբողջ ժողովուրդին, կը ներկայացնէ արուեստագէտներու և ուսումնագէտներու խումբը:

Ա. ԵՐԶԱՆԱԿԸ, հինգէն տասը առ հարիւրը կազմուած է արուեստասէրներէ և մտաւորականներէ:

Բ. ԵՐԶԱՆԱԿԸ, քսանէն քսանհինգ առ հարիւրը բաղկացած է ընթերցողներէ և մշակոյթի բարեկամներէ:

Գ. ԵՐԶԱՆԱԿԸ, երեսունհինգ առ հարիւրը Մշակոյթին գոյութիւնը ճանչցողներէ և զայն յարգողներէ կազմուած է:

Դ. ԵՐԶԱՆԱԿԸ, քառասուն առ հարիւրը ամբողջ ժողովուրդին՝ կը ներկայացնէ Մշակոյթին հետ մասնաւոր կապ մը չունեցողներն ու անտարբերները, հետուէն՝ անոր «բնազդաբար» հետևողները:

Ո՛չ մէկ ժողովուրդ հարիւր առ հարիւր, ու նոյնիսկ վաթսուն առ հարիւր ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ Է. բայց ակնկալելի՛ է որ գէթ ՅԱՐԳԱՆՔԸ մշակոյթին նկատմամբ, ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ թէ ան ԿԱՐԵՒՈՐ Է՝ ըլլայ ընդհանուր երևոյթ մը ժողովուրդին մէկ զգալի մասին համար: Մշակութային իրագործումները ըմբռնել և ըմբռշխնել ՉԿԱՐԵՆԱԼՈՒ պարագային իսկ՝ կենսական է որ ժողովուրդը, առ հասարակ, ԳԻՏՆԱՅ թէ մշակոյթը ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ՛, և զայն բարձր գնահատողներ կան:

Դ.- ՄՇԱԿՈՅՔ ԵՒ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ

Գաղթական հաւաքականութիւններու պարագային, այլասերումի առաջին հարուածը ուղղուած կ'ըլլայ անոնց լեզուա-իմացական մշակոյթին, որ խարխիւսն իսկ է անոնց գոյութեան: Ու երբ խախտին մշակոյթին լեզուա-իմացական հիմերը՝ կը սասանի ժողովուրդին ամբողջ գոյութիւնը, որովհետև աքտրական հաւաքականութիւն մը (հրեաներու պարագան անսովոր բացառութիւն է) ո՛չ մէկ ատեն կրնայ կանգուն պահել քաղաքակրթութեան միւս ինը սիւները: Եւ ահա այն ատեն, այդ փոքրամասնութիւնը կը դադրի ԱԶԳԱՅԻՆ համայնք մը ըլլալէ, ու կը վերածուի ՏՈՂՄԱՅԻՆ փոքրամասնութեան մը, տոհմավարքային (ethnic) խմբակցութեան մը: այլ խօսքով՝ կ'ըլլայ հին ժողովուրդէ մը մնացած յիշատակ-բեկոր մը:

Լեզու, և անով ապրող և ստեղծագործող ՄԻՏՔ՝ ահա՛ նախապայմանները ճշմարիտ մշակոյթին:

Արդ, անհրաժեշտ է որ սփիւռքը ունենայ իր ազգային մշակոյթը, ըլլայ մշակութային հաւաքականութիւն՝ որպէսզի կարենայ ծնունդ տալ ՍՓԻՒՌԱՀԱՅ ՆՈՐ ՏԻՊԱՐ-ին, որ անխուսափելիօրէն տարբեր պիտի ըլլայ մեզի ծանօթ հին տիպարէն: Առանց ՍՓԻՒՌԱՀԱՅ ՏԻՊԱՐ-ին, առանց ազգային ժամանակակից ինքնութեան մը, ՍՓԻՒՌ ԶԻ ԿՐՆԱՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ

ՈՒՆԵՆԱԼ ու տևել. իրարու չնմանող, իրարու հետ զօրաւոր կապեր չունեցող անձեր ի՞նչպէս կրնան ազգային հասարակութիւն մը գոյացնել, հաւաքական պատասխանատուութիւններ ստանձնել, նոյն երազին ծառայել:

Բայց կայ ատելի՛ն.– մեզի համար մշակոյթը՝ սոսկ մշակոյթ ըլլալէ շատ ատելի՛ փորձած է ըլլալ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԻ ԶԷՆՔ ՄԸ, և ՄԻԱԿ զէնքը. և իրականութիւնը այն է որ վերջին եօթանասուն–եօթանասունհինգ տարիներուն մանաւանդ, ջանացած ենք մեր ստեղծած արուեստային–իմացական մշակոյթով փոխարինել քաղաքակրթութեան միւս ուժերը, երբ գիտե՛նք թէ մեր մշակոյթը, առանձինն, չէր կրնար նոյնիսկ ինքզինքն ապրեցնել:

Յաջորդող էջերով կու տանք
Դոկտ. Վաչէ Ղազարեանի ուսում-
նասիրութիւնը, որ իրմէ խնդրած էինք
սատրաստել ի պատասխան Պր.
Գագիկ Յարութիւնեանի հարցա-
րանին:

Մ.Մ.

ՈՍԿԵԱՅ ԱՌԻԹՐ

*Ապրե՛ք երեխեք, բայց մեզ պէս չապրեք:
Յովհաննէս Թումանեան*

Հայաստանի Հանրապետութեան նախկին փոխ-նախագահ Գագիկ Յարութիւնեանին կողմէ Մկրտիչ Մալխասեանին տրուած հարցարանը՝ Հայաստան-սփիւռք փոխ-աւրընչութիւններու վերաբերեալ,¹ մեկնակէտ մըն է: Հոն ակներև է բովանդակ հայութեան ներկայ կացութեան քննարկման, ապա նաև՝ այդ քննարկման արդիւնքներուն հիման վրայ՝ Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները նոր մակարդակի մը հասցնելու դիտաւորութիւնը:

Որոշ է թէ Հայաստանի մէջ ստեղծուած է նոր կացութիւն մը անկախութենէն ետք. կացութիւն՝ որ իր նկատաւելի ազդեցութիւնը ունեցած է նաև գաղթաշխարհի հայկական հաւաքականութիւններուն վրայ:

Նոյնպէս որոշ է թէ կայ նոր մտածողութիւն մը թէ՛ Հայաստանի և թէ՛ սփիւռքի մէջ. մտածողութիւն՝ որ ձևաւորուած չէ կանխակալ մօտեցումներով:

Կա՛ն նաև առանձնաշատուկ իրավիճակներ զանազան գաղութներու մէջ: Աւելի՛ն, պիտի ըսէինք՝ որքան գաղութ, այնքա՛ն մէկը միւսէն տարբեր իրավիճակ. յաճախ՝ բազմազան իրավիճակ-

¹ Ահաւասիկ այդ վեց հարցերը.-

1. Հայաստանում ստեղծուած կացութիւնը անկախութիւնից յետոյ, ընդհանուր հայկական առումով:
2. Նոր իրականութիւնը և նոր կացութիւնը սփիւռքում.
ա.- Ընդհանուր նոր մտածողութիւնը սփիւռքում.
բ.- Առանձնաշատուկ իրավիճակները տարբեր գաղութներում և ըստ տարբեր կառոյցների:
3. Հայաստանի պետութեան դերն ու դերակատարութիւնը սփիւռքի հարցում:
4. Սփիւռքի դերը ազգապահպանման և ազգային պետութեան գոյացման ու զօրացման գործում:
5. Հայաստան-սփիւռք յարաբերութիւնների արդի վիճակի գնահատումը:
6. Հայաստան-սփիւռք յարաբերութիւնների ցանկալի վիճակը. դրան հասնելու նպատակները, խնդիրները, միջոցները, մեխանիզմները:

ներ գաղութի մը բաղադրամասերուն մէջ (Ֆրեզնօ բնակող հայը իր ներքին թէ արտաքին աշխարհով տարբեր է Պոսթօն բնակող հայէն, ինչպէս որ Ղամիշլի բնակողը տարբեր է Հալէպ բնակողէն...): Սիսալ պիտի չըլլար ըսել՝ որքան գաղութ, այնքան մշակոյթ:

Ինչպէս կը պարզուի հարցարանին երրորդ և չորրորդ հարցումներէն, կայ տակաւին Հայաստանի պետութեան փափաքը՝ դերակատարութիւն մը ունենալու սփիւռքի մէջ, և ակնկալութիւնը՝ որ սփիւռքն ալ դերակատարութիւն մը ունենայ թէ՛ ինքնապահպանման և թէ՛ հայկական պետութեան զօրացման մէջ:

Հարցարանին վերջին երկու հարցումները կը յուշեն թէ գոհացուցիչ չէ Հայաստան-սփիւռք յարաբերութիւններու ներկայ վիճակը, հետևաբար՝ զայն պէտք է հասցնել ցանկալի մակարդակին:

* * *

Քննելէ առաջ նշուած հարցարանը, կատարենք կարգ մը հաստատումներ, որոնք անհրաժեշտ են պարզաբանելու համար մեր մօտեցումը խնդրոյ առարկայ հարցին:

ա.- Հաւաքական կեցութիւնը կը պայմանաւորէ հաւաքական գիտակցութիւնը, այնպէս ինչպէս հաւաքական գիտակցութիւնը կը պայմանաւորէ հաւաքական կեցութիւնը: Յարատև փոխազդեցութեան և ներգործութեան մէջ են հաւաքական գիտակցութիւն ու կեցութիւն:

բ.- Ինչ որ ճիշդ է հաւաքականութեան մը համար, ճիշդ է նաև հաւաքականութիւնը բաղկացնող անհատներու համար: Անհատի մը կեցութիւնը կը պայմանաւորէ անհատին գիտակցութիւնը, և կը պայմանաւորուի անհատին գիտակցութեամբ: Նոյնպէս՝ անհատական և հաւաքական կեցութիւններ ու գիտակցութիւններ կը պայմանաւորուին իրարմով՝ յարատև փոխազդեցութիւններու և ներգործութիւններու բերումով:

գ.- Մշակոյթը՝ ընկերային երևոյթ, հանրագումարն է հաւաքականութեան և անհատին ստեղծագործական բոլոր այն արտայայտութիւններուն, որոնք կը միտին հաւաքականութեան և անհատին կենսապայմաններու բարելաւումին:

դ.- Լեզուն, իբրև գրաւոր կամ բանաւոր արտայայտութեան և հաղորդակցութեան միջոց, բայց մանաւանդ իբրև մտածողութեան միջոց, կը կազմէ հիմքը մշակոյթին:

ե.- Հայկական մշակոյթը հայելին է հայութեան կենսապայմաններուն և կենսաձևին: Անոր արտացոլացումին եղանակով պայմանաւոր է հայութեան ապագայ կենսաձևին մարմնաւորումը:

գ.- Ձևը արդիւնքը ձևատրումի գործողութեան, է անձնութեան վախճանը, որ իր մէջ կը կրէ սաղմը նոր անձնութեան մը:

է.- Անհատի, հաւաքականութեան, ընդհանրապէս մարդկութեան անվերջ աստիճանաձև զարգացումը կը կատարուի հանգրուանային նպատակադրումով և իրագործումովը ձևերու, որոնք կը պայմանաւորեն տեսակն ու որակը նաև յաջորդ սանդղամաստին:

ը.- Հայ մշակոյթը քննելու, վերաքննելու և վերակերտելու աշխատանքին գլխաւոր թիրախը պիտի ըլլայ հայ ժողովուրդը նոր, յառաջացեալ, բարելաւ վիճակի մը հասցնել՝ իր ստեղծագործական բոլոր արտայայտութիւններուն մէջ, միաժամանակ գոյացնելով հասարակաց առանցք մը, որ ըլլայ կեդրոնաձիգ ուժը աշխարհասփիռ հայութեան:²

թ.- Հասարակաց առանցքը կենսական է անոր համար որ այսօր աշխարհի չորս ծագերուն կան հայկական համարուող և հայկականի յաւակնութիւն ունեցող բազմաշերտ մշակոյթներ..., ինչպէս նաև զանազան վայրերու մէջ զանազան ուժգնութեամբ ու թափով կատարուող ձուլումի գործընթացներ:³

² 1988-ի Դեկտեմբեր 7-ի չարաղէտ երկրաշարժէն ի վեր, արևմտեան մշակոյթով սնած և անոր բարիքները վայելած նախանձախնդիր անհատներ կամ խմբաւորումներ իրենց համար նպատակակէտ դարձուցած են Հայաստանն ու հայ ժողովուրդը հասցնել արևմտեան աշխարհի երկիրներու և ժողովուրդներու մակարդակին... արևմտականացնելով զայն:

Չգտումը ձեռք կը բերէ աղիտաբեր նկարագիր, երբ «արևմտականացում»-ի տակ կը հասկցուի հակասումը ամէն «արևելեան» վարք ու բարքի և ամէն ազգային նուաճումի. նուաստացումն ու մերժումը մեր ազգային, ՀԱՅ մշակոյթի փառաւոր հարստութեան, որմէ լոյս և բարութիւն կարելի է բաժին հանել համայն մարդկութեան. հերքումը նոյնիման հայու դարերէ ի վեր կոտած ու կոփուած նկարագրի գիծերուն: Կասկած չկայ թէ պէ՛տք է ձերբազատուիլ արատաւորէն ու թերիէն. պէ՛տք է օրինակել ու որդեգրել ուրիշին լաւն ու բարելաւը. բայց Ո՛Չ ուրացումովն ու անտեսումովը ազգային արժէքին՝ տգիտաբար թէ այլապէս: Խորհրդային հասարակարգը ճգնեցաւ արհեստակցօրէն փոխել հայկական հողին շաղուած հայ մարդուն նկարագիրը՝ «նոր մարդ» ստեղծելու տարագին տակ: Եւ ձախողեցաւ: Հիմա սփիւռքահայ նախանձախնդիրներ կը ջանան փոխել նո՛յն մարդը, այս անգամ «արևմտականացնելու» պիտակին ներքև: Պիտի ձախողին: Բայց ինչպէս որ խորհրդային ճիգերը վնասեցին անոր ու աղարտեցին զայն, այնպէս ալ ներկայ ջանքերը պիտի աղճատեն զայն...:

Մեր ուղին պէ՛տք է ըլլայ մեր ազգային-հաւաքական ուրոյն դիմագիծին պահպանումն ու զարգացումը մեր դարակուտակ պատմական, մշակութային, հոգևոր արժէքներու հիմքին վրայ և անոնց մաքրագտումով միայն՝ ձերբազա՛տ թերարժէքութեան մերժելի զգացումէ և հպա՛րտ գիտակցութեամբը մեր արժէքներուն:

³ Ամերիկաբնակ հայուն ատօրեային մաս կը կազմեն սակարանն ու

Ժ.- Հայաստանը խարխիսն է ՀԱՅԹԵԱՆ գոյութեան և խորհրդանիշը՝ ՀԱՅԹԵԱՆ յատկութեան:

Ժա.- Սփիւքը ամբողջութիւնն է հայ պետականութեան անմիջական ոլորտէն դուրս գտնուող ԿԱԶՄԱԿԵՐՊ հայ հաւաքականութիւններու: Հօր ու կենսունակ է ան, երբ կենդանի է իր կապը Հայաստանի հետ և ունի ան իր գոյատևութիւնը իմաստաորող նպատակ. և տկար ու մահամերձ է ան, երբ խզուած է իր կապը Հայաստանի հետ և աղօտած իր գոյատևութեան նշանակութիւնը:⁴

սակարանային վիճարկումները. մինչ սուրիահայը, որ ճնշող մեծամասնութեամբ հեռու է սակարանէն, ունի բոլորովին տարբեր հետաքրքրութիւններ:

Սուրիա, Լիբանան, Եգիպտոս տակաւին անուանակոչութիւններու առիթով կը լսուի «Անուն՝վդ սպրիս» մը.- օսմանեան և այլ տիրապետութիւններու ներքև հայերու բռնի օտարացման ազդեցութեամբ ձևաորուած բարեմաղթութիւն մը՝ իբրև ինքնապահպանումի արտայայտութիւն: Երոպայեան և ամերիկայեան հայեր վաղուց հրաժեշտ տուած են ազատ աշխարհին անծանօթ այդպիսի արտայայտութիւններու:

Ատնք մասնակի, թերևս նաև աննշան զանազանութիւններ են:

Հիմնական զանազանութիւնը լեզուներու գործածութիւնն է. այսինքն՝ գործածութիւնը մշակոյթի հիմնական բանալիին:

Կարելի չէ ըլլալ յունախօս հայ մը, որ չի կրնար հասկնալ արաբախօս կամ սպանախօս հայերն ու հաղորդակցիլ անոնց հետ, և յասկնիլ տէր ըլլալ հայկական մշակոյթի...:

Գլխաւոր զանազանութիւն մըն է նաև տուեալ երկրին նկատմամբ քաղաքացիական զգացողութիւնը: Կարելի չէ ակնկալել որ Միջին Արևելք բնակող հայերու հաւաքականութիւն մը,- որ տակաւին կը գործէ այն գիտակից կամ ենթագիտակից մտապատկերով՝ թէ տուեալ երկիրը ժամանակաւոր հայրենիք մըն է,- և Միացեալ Նահանգներու քաղաքացի հայերու հաւաքականութիւն մը,- որ Միացեալ Նահանգները կը դասանի իբրև իր մնալուն հայրենիքը,- ունենան նոյն և նման մշակոյթ՝ թէև նկատուին հայ օտարներու կողմէ, և կամ իրենք զիրենք ներկայացնեն իբրև հայ:

Հայաստանաբնակ հայուն գլխաւոր մտահոգութիւնը,- նեղ մօտեցումով մը,- կրնայ ըլլալ Հայաստանի զօրացումն ու զարգացումը ամէն բնագաւառի մէջ, ապա նաև,- լայն առումով մը,- աշխարհի զարգացումը: Արտահայաստանցի հայուն գլխաւոր մտահոգութիւնը կրնայ բաժնուիլ երեքի.- երկիրը, որուն քաղաքացին է ան, Հայաստանը, և աշխարհը:

⁴ Տեղին պիտի ըլլայ կատարել ընդգծում մը: Սփիւքը մեր ժողովուրդի պարագային հին երևոյթ մըն է: Մենք սփիւք ունեցած ենք միջին դարերէն սկսեալ: Բայց բնա՛ւ չենք ունեցած հայ անկախ կամ կիսանկախ իշխանութիւններու կողմէ (աշխարհիկ թէ հոգևորական) ճիգ մը՝ սփիւքի հետ կենդանի կապ հաստատելու: Կարելի չէ մատնացոյց ընել միջին դարերէն մինչև անցնող դար գրաւոր աղբիւր մը, ուր ի յայտ գայ սփիւքի նկարագրութեամբ կամ մարդահամարով և կամ հնարաւորութիւններով ու նակատագրով զբաղելու լուրջ ճիգ:

ժբ.- ՀԱՅԹԻՖԻՆԸ,- աշխարհի ո՛ր կողմն ալ կայք հաստատած ըլլայ,- կը բաժնէ ՄԷԿ և ՆՈՅՆ ԾԱԿԱՏԱԳԻՐ, որով այդ ճակատագրին ձևաորումը անհրաժեշտ կը դարձնէ ունենալ ՄԷԿ և ՆՈՅՆ ԾՐԱԳԻՐ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ:

ժգ.- ՀԱՅԹԻՖԻՆԸ ի վիճակի է անփոխարինելի ներդրում ունենալու ազգերու միջև համաշխարհային նոր որակի համակեցութեան մը ստեղծման մէջ, որովհետև մեր ժողովուրդն ու հայրենիքը ունին դարերու եզակի փորձ մը.- քաղաքակրթութեան օրրան և քաղաքակրթութիւններու խաչմերուկ, Արևելքի և Արևմուտքի հանդիպակէտ, աշխարհակալ, պետականագորկ, ցեղապանութեան զոհ, խաղաղապաշտպան, իրաւատէր ու իրաւապահանջ: Այլ խօսքով, միաձուլումը այնպիսի պատմական փորձառութիւններու, որոնց համադրումին դժուար է հանդիպիլ ուրիշ ժողովուրդի մը մօտ: Տակաւին այլ խօսքով սեփականատէրն ենք մշակոյթի մը, ուր պատմութեան բոլոր ձախողութիւններն ու յաջողութիւնները, պարտութիւններն ու յաղթանակները, արհաւիրքներն ու նուաճումները վերածուած են խաղաղասիրութեան, բարութեան, լուսապաշտութեան, վերապրումի անընկճելի կամքի նրբաթելի մը, որ կրնայ մարդկութեան բարօրութեան և խաղաղ գոյակցութեան ձգտող ազգեր շաղախել իրարու:

Համաշխարհային քաղաքակրթութեան մէջ այսօրինակ դերակատարութեան մը տեսլականովն է որ մենք կ'ուզենք, ահաւասիկ, մօտենալ Հայաստան-սփիւռք առընչութիւններու հարցին, որ ուրիշ բան չէ մեզի համար, եթէ ոչ ՀԱՅԹԵԱՆ ամբողջական կարողականութեան վերբերումը:

* * *

Հիմա դառնանք հարցարանին և առնե՛նք, մէկ առ մէկ, յիշեալ վեց հարցերը:

1.- Անկախութենէն ետք Հայաստանի մէջ ստեղծուած կացութիւնը հակիրճ բառերով ներկայացնելու համար կարելի է տարբեր տեսանկիւններէ մեկնելով կատարել զանազան հաստատումներ: Ոմանք կրնան զայն կոչել անցումային շրջանի իրավիճակ (անցում՝ կեդրոնացեալ ընկերվարական տնտեսութենէ ազատ շուկայական յարաբերութեան, ամբողջատիրութենէ՝ ժողովրդավարութեան, կախեալութենէ՝ անկախութեան), ուրիշներ կը փորձուին ինքահաստատումի իրավիճակ նկատել զայն, իսկ մենք զայն կը նկատենք ծննդոցի իրավիճակ, որ անխուսափելիօրէն կը նախորդուի քառսով կամ անձնութեամբ: Ինչպէս որ կրօնական հասկացողութեամբ աստուած անձնութենէն ստեղծեց ձև ու ձևեր (ամբողջ արարչութիւնը), ինչպէս որ արուեստագէտ մը իր միտքի և յոյզերու

անձնութենէն դուրս կը բերէ ձևեր (արուեստի վերջնականապէս ձևաորումած ստեղծագործութիւնները), այնպէս ալ հայ ժողովուրդը իր չսպասած մէկ պահուն իր դիմակալած հսկայ անձնութենէն հրաւիրում է ներկայ հանգրուանին դուրս բերելու ՆՈՐ ԶԵՒՈՎ Հայաստան մը, որուն գոյատևութիւնն ու բարգաւաճումը իրենց երաշխիքը կրնան գտնել միայն ՆՈՐ ԶԵՒՈՎ հայութեան մը մէջ:⁵

Ծննդոցի այս քառասյին շրջանին մէջ կը նկատենք հինի և նորի յաիտենական բախումը. հինին արմատականօրէն կատշելու կամ հինէն հասցեւորվ հրաժարելու երևոյթներ. նորին հանդէպ ընդդիմութիւն, վերապահ ընդունելութիւն, և պաշտամունքի հասնող խանդավառութիւն, ևլն.:

Այդ երևոյթներէն, սակայն, մենք պիտի առանձնացնենք քանի մը հատ միայն, զանոնք աղերսելու համար մեր նիւթին:

Տնտեսական մարզի մէջ կը նշմարենք անհնէքնաբաւութիւն և պարտքերու կուտակում՝ ազգային-պետական չափանիշով. ազատ շուկայական յարաբերութիւններու աստիճանական զարգացում. սակաւաթիւ ձեռներէց անհատներու հարստացում և միջին դասակարգէն անհատներու մեծաթիւ աղքատացում. ուժանիւթի անբաւարարութեան հետևանքով արդիւնաբերութեան կաղացում. օտար ներդրումներ և Հայաստանի ազգային հարստութիւններու արտա-

⁵ Անհրաժեշտ է որ բացատրութիւն մը տանք նոր հայութեան մասին: Կրօնական ուսմունքներու հիմնական ձգտումներէն մին եղած է նոր մարդու կերտումը: Նոյնպիսի ձգտում յաւակնած է ունենալ համայնավարական վարդապետութիւնը: Քիչ անգամ ուսմունքներ և վարդապետութիւններ յաջողած են իրենց ամբողջական դասանանքին համապատասխան նոր մարդ կերտելու իրենց յառաջադրանքին մէջ. բայց անոնք մեծապէս ազդած են մարդոց բարեշրջական (կամ յոռեշրջական) հոլովոյթին վրայ: Երբ կը խօսինք նոր հայու մասին, ուսմունքային-վարդապետական պատրանքներով չէ որ կ'առաջնորդուինք, այլ՝ նկատի ունինք այն իրողութիւնը, որ գիտակցութեան և կեցութեան փոխազդեցութիւններու որոշ հունաորումով կարելի կ'ըլլայ ստեղծել հաւաքական նոր տիպարներ: Հետաքրքրական է պարագան օսմանեան լուծի տակ հեծած ժողովուրդներու: Ըստ օտար ճանապարհորդներու վկայութեան, տասնվեց և տասնէօթերորդ դարերուն արդէն իսկ յոյներու և հայերու մօտ նշմարելի էր կամաւորապէս թրքանալու ճիգ մը, որպէսզի թուրքերու համահասար իրաւունքներով շարունակեն իրենց կեանքը: Քրիստոնէաներ հալածելու և անոնց վրայ բռնանալու ԿԵՑՈՒԹԻՒՆԸ թրքացման փորձերու ընդդիմացող հայուն և յոյնին մէջ յառաջացուցած էին նոր ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ մը, որով և նոր յոյն մը կամ հայ մը: Թող որ, այս մասնաւոր պարագային, նոր գիտակցութիւնը այնպիսի արմատական փոփոխութիւն մը մտցուցած էր փոփոխելիին մէջ, որ ան կորսնցուցած էր իր էութիւնը և ձեռք բերած նոր էութիւն, որով և նոր տեսակ ու որակ: Մեր առաջադրածը էութեան փոփոխութիւն չէ, այլ՝ բարեշրջում կամ եղաշրջում:

հանման մեծաշնորհներու տուչութիւն հայ բայց նաև ոչ-հայ ներդրումներու:

Մշակութային գետնի վրայ կը գտնենք համատարած ընկերակուս: Նախապէս պետութեան հոգածութիւնը վայելող արուեստներն ու գիտութիւնը մնացած են պատահական շիճուկներու գոյթին. թէև բազմացած է թիւը մամուլին, բայց զգալապէս կրճատուած է ծաւալը գրահարատարակչութեան. կատարողական արուեստները կորսնցուցած են իրենց երբեմնի տարողութիւնը. հայ միտքը բռնած է գաղթի ճամբան:

Կրթական դաշտը հաւանաբար ամէնէն աւելի թողլքեալ վիճակը կը պարզէ՝ ուսուցիչ-դասախօսներով, աշակերտ-ուսանողներով, թէ դպրոց-համալսարաններով. կա՛յ դասագիրքերու պակաս. կա՛յ նոր դասագիրքերու հրատարակութեան կարիք. կա՛յ միջազգային հիմնարկներու ներդրում՝ նոր դասագիրքերու հրատարակութեան համար, բայց չկա՛յ ազգային ծրագիր մը, որուն հիման վրայ պատրաստուին անոնք՝ նպաստելու նոր կացութեան, նոր գիտակցութեան, նոր ձևով հայութեան գոյացման:

Կրօնական առումով, ականատես կը դառնանք եկեղեցույ և եկեղեցականներու աշխուժացման. ժողովուրդին մէջ կը բորբոքի կրօնական զգացումը. յարանուանութիւններ և աղանդներ կը փութան գործելու երկրին մէջ: Բայց կրօնական զգացումներու բովն ի վեր կ'աճի նաև ան-իմացութիւնը (ակնութիսիզմ):

Ընկերային մարզի մէջ կը հանդիպինք հաւաքական հոգեբանութեան ամենաարագ փոփոխութեան: Օտարամուտ բարքեր կ'աճին. դրամապաշտութիւնը ինքզինք զգալի կը դարձնէ իւրաքանչիւր քայլափոխի. մշակոյթի գործիչներ այլևս ո՛չ միայն չեն արժանանար երբեմնի յարգանքին, այլև առարկայ կը դառնան ծաղրի ու արգահատանքի, ևլն.:

Բնակչագրական առումով երկիրը կը տատապի լուրջ արինա-հոսութենէ մը: Օտար երկիրներ դիմող հարիւր հազարաւոր հայեր իրենց մեկնումով կը նուազեցնեն պաշտպանական և առ հասարակ մարդուժի կարողականութիւնը երկրին, միաժամանակ վնաս հասցնելով բոլոր միւս մարզերուն (ընդհանրապէս սպառողական շուկայի կրճատում, այդ շուկան ըլլայ արդիւնաբերական թէ «արուեստներու»):

* * *

2.- Ի՞նչ է սփիւքի արդի վիճակը. այսինքն՝ սփիւքի մէջ արձանագրուած խմորումները Արցախի ազատագրական շարժման պողոթնումէն, 1988-ի Դեկտեմբերին հայրենաբնակ մեր ժողովուրդը կոտորակած, զայն դժբախտացուցած ու հայրենիքին տնտեսական

ու ընկերաքաղաքական կեանքը անբնականոնացուցած երկրաշարժէն, ապա նաև հայութեան առջև նոր ճամբաներ բացած անկախութեան հռչակումէն ի վեր:

Ընդհանուր առմամբ, Միջին Արևելքի մէջ աւելի մեծ հետաքրքրութիւն հայրենիքի նկատմամբ, մինչ Եւրոպայէն մինչև Միացեալ Նահանգներ ու Հարաւային Ամերիկա՝ ցեղի ձայնի և խիղճի զարթնում մը հայորդիներու մօտ, որոնք մինչ այդ կորսուած կամ անտարբեր կը նկատուէին աշխուժօրէն ազգային կեանքի մէջ նետուած այլ հայորդիներու կողմէ:

Ազգային բեմի վրայ փայլող նոր դէմքեր և անշքացող հին դէմքեր:

Աւանդական քաղաքական, բարեսիրական, մարզական թէ այլ բնոյթի կազմակերպութիւններու մէջ գաղափարախօսական, վարքագծային, կառուցային, առաջնադասութիւններու և այլ կարգի փոփոխութիւններ ու վերիվայրումներ, յաճախ նաև՝ խարխափումներ:

Նոր խմորումները, ինքնաբերաբար թէ արտաքին գործօններու որոշիչ ազդեցութեամբ, կը կատարուին երկու ուղղութեամբ.

ա.- Տարանջատում և մասնատում,

բ.- Համախմբում և միասնականացում:

Այլ խօսքով, մէ՛կ կողմէ երևան կու գան փոքր և հիմնականին մէջ մասնակի ծրագիրներ հետապնդող նոր կազմակերպութիւններ (Հայ Կանանց Միջազգային Ընկերակցութիւն, Ամերիկահայ Ներազդման Յանձնախումբ/Արմինիըն Էմերիքըն Էքշըն Քըմիթի), մի՛ւ կողմէ ի յայտ կու գան համա-կազմակերպութիւններ՝ կազմուած իրարմէ անջատաբար գործող աւանդական յարաբերաբար մեծ կազմակերպութիւններու համախմբումով (Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեղական մարմինները) կամ նորակազմ փոքր կազմակերպութիւններու մէկտեղումով (Ֆրանսահայ Կազմակերպութիւններու Համախմբումը/Ֆորում):

Այս երևոյթներուն դրդապատճառները բազմերանգ են: Հայրենիքին օգտակար դառնալու մղող հայրենասիրական ազնիւ զգացումներ, հայրենի կառավարական մարմիններու հետ ուղղակի շփման մէջ ըլլալու հմայք և փառասիրութիւն, աւանդական կազմակերպութիւններու նկատմամբ վերապահութիւններ և դժգոհութիւններ, Հայաստանի կարիքներուն ծաւալն ու բազմակիութիւնը, արցախահայութեան կարիքներու տարողութիւնն ու բազմազանութիւնը կը կազմեն հիմնական առարկայական ենթահողը այդ երեւոյթներուն: Ասոնց պէտք է աւելցնել Հայաստանի իշխանութիւններուն վարած քաղաքականութիւնը, որ սկիզբէն և էթ բնորոշուեցաւ սփիւռքի մէջ աւանդական կառուցներու և մասնատրապէս քաղաքական կուսակցութիւններու տկարացման յատկանիշով:

Բայց անկախաբար Հայաստանի իշխանություններու վարքագիծէն՝ կային արդէն սփիւոքի կազմակերպական տկարացումին առաջնորդող այլևայլ ազդակներ:

ա.- Զուլում- որ կազմակերպականօրէն դիտելով՝ ուժասպառող երևոյթ մըն է. ան կ'ընդգրկէ ընդհանրապէս հայկական ամէն ինչէ իրենց կապը գիտակցաբար խզած ծագումով հայ անհատներ:

բ.- Այլուրացում- բազմաշերտ երևոյթ մը՝ առողջի և անտաւորի երկու բնեղներով: Այս սահմանումին ներքև կը խմբաւորենք բոլոր ծագումով հայ այն անհատները, որոնք իրենց կապը չեն խզած հայկականին հետ, սակայն ազգայինի և ազգային կազմակերպություններու սահմանները նեղ գտնելով իրենց նպատակներուն, կարողություններուն կամ փառասիրություններուն համար՝ տեղական կեանքին բացուած են և ներգրաւուած ոչ-հայկական կազմակերպություններու մէջ: Անոնք կորուստն են հայ կազմակերպական կեանքին, բայց նաև նպաստ մը կրնան ըլլալ, լայն առումով, եթէ իրենց ազդեցութեամբ օտար միջոցներ լծեն հայկական հարցերու լուծման կամ շահերու ապահովման:

գ.- Մասնագիտացում- սփիւոքի մեծագոյն հարստություններէն մէկը. հո՛յլը բարձրորակ մասնագէտներուն, որոնք պատկառելի թիւ մը կը կազմեն տպաւորիչ որակի հետ մէկտեղ: Բայց քիչ անգամ է որ որակեալ մասնագէտները հայկական աւանդական կազմակերպություններու մէջ իրենց համար տեղ ու գործունէութեան արդիւնաւէտ դաշտ կը գտնեն ատենէ մը ի վեր: Յոռեգոյն պարագային, անոնք կ'երթան միանալ այլուրացողներու բանակին, իսկ լատագոյն պարագային՝ կը ձեռնարկեն իրենց մասնագիտութեան ճամբով հայ կեանքին օգտակար դառնալու աշխատանքի մը, կա՛մ անհատապէս և կա՛մ կազմելով համապատասխան խմբակցություններ ու կազմակերպություններ:

Եւ այս բոլորը կը նպաստեն սփիւոքի կազմակերպական մեքենային քայքայման:

Այս բոլորով հանդերձ, երբ ուզենք ակնարկ մը նետել սփիւոքեան նոր⁶ մտածողութեան վրայ, կը տեսնենք հետևեալ գլխաւոր հաւաքական շերտաւորումները.-

ա.- Հայաստան ընդդէմ սփիւոքի՝

- Հայաստանն ընդունիլ իբրև հայութեան ներկայի և ապա-

⁶ Նոր բառը պէտք է ընդունիլ վերապահութեամբ, որովհետև մտածողական բոլոր հոսանքներն ալ նոյն ձևով կամ նրբերանգային տարբերություններով գոյութիւն ունէին Հայաստանի Առաջին Հանրապետութեան ձևաւորումի շրջանին, ինչպէս նաև Հայաստանի խորհրդայնացումէն ետք ծաւալած Հայաստան-սփիւոք յարաբերություններու միջոցին:

գալի գոյութեան միակ գրասականը և կարելի բոլոր միջոցներով աջակցիլ անոր հզօրացման: Ամէ՛ն բան Հայաստանի համար կը դաւանին անոնք:

- Հայաստանը կ'անտեսէ սփիւքն ու անոր կարիքները, հետևաբար սփիւքն կը մնայ հոգ տանիլ ինքը իրեն: Սփիւքն միջոցները միայն սփիւքի՛ համար կը դաւանին անոնք:

- Հայաստանն ունի թէև ծով կարիքներ և սփիւքի պարտականութիւնն է հասնիլ այդ կարիքներուն, բայց անոնցմէ առաջ սփիւքն ունի ի՛ր կարիքները, որոնց Հայաստանը ո՛չ տրամադիր է և ո՛չ ալ ի վիճակի հասնելու, հետևաբար սփիւքը իր միջոցները առաջնադա՛սօրէն պէտք է յատկացնէ իր կարիքներուն:

- Սփիւքի հիմնական ձգտումն է վերատիրացումը իր պապենական հայրենիքին՝ Արևմտահայաստանին: Հայաստանը չի՛ բաժներ այդ ձգտումը և չ'առնէ՛ր քայլեր այդ ուղղութեամբ: Հետևաբար սփիւքահայութիւնը պէտք է գոյացնէ իր անջատ համասփիւքեան ղեկավարութիւնը և իր բոլոր միջոցները տրամադրէ իր Մեծ Երազին իրականացման:

- Հայաստանի և սփիւքի գոյապահպանութիւնն ու զարգացումը պայմանաւոր են իրարմով, հետևաբար Հայաստան և սփիւք պէտք է փոխադարձաբար օգնեն իրարու՝ ըստ կարիքի և պատենութեան:

բ.- Գաղութահայ քաղաքական առաջնորդութիւն՝

- Աւանդական քաղաքական կուսակցութիւնները պէտք է շարունակեն քաղաքական առաջնորդութիւն տալ գաղութներուն (կուսակցականներու և համակիրներու թէզը՝ բնականաբար):

- Աւանդական քաղաքական կուսակցութիւնները այլևս ժամանակավրէպ են և հարկ է որ վերջ տան իրենց գոյութեան ու իրենց դերը զիջին կա՛մ բարեսիրական միութիւններու, կա՛մ եկեղեցիին, և կա՛մ Հայաստանի իշխանութիւններուն՝ դեսպանատուններու և հիւպատոսարաններու միջոցով (առաւելաբար թէզը հակակուսակցականներու, իրենց միութիւնը կամ եկեղեցին առաւել ևս զօրացնելու հակամէտ աշխարհիկ և հոգևոր դէմքերու, Հայաստանի պետական կարգ մը շրջանակներու):

- Ինչպէս անցեալին, այնպէս ալ ներկայիս և այսուհետև եկեղեցին պիտի խաղայ գաղութահայութեան քաղաքական (նոյնիսկ ընդհանրակա՛ն...) առաջնորդի դերը (թէզը՝ եկեղեցականներու և օտար հոգեբանութիւն որդեգրած օտարածին հայերու):

գ.- Հայաստանի հետ յարաբերութեան կերպ՝

- Յարաբերիլ համապատասխան կառոյցներու միջոցով (աւանդական քաղաքական թէ ալ բնոյթի կազմակերպութիւններ, Հայաստան Հիմնադրամ, ևլն.):

- Շրջանցել բոլոր կառոյցները և կա՛մ հիմնել սահմանա-

փակ նպատակով նոր կառույց (մասնագիտական միաորումներու աճումը), և կա՛մ անհատապէս յարաբերիլ հաշատանեան որևէ կառույցի կամ անհատի հետ:

Վերոյիշեալներէն առաջինին և երրորդին պարագային ընդ-հանուր միտումը կը թոյլ ըլլալ անհատական նախաձեռնութիւն՝ հաւաքականի փոխարէն⁷ և նկատառում թէ՛ սփիւռքի և թէ՛ հայ-րեւելիքի կարիքներուն՝ առանց մէկը զոհելու միսին: Մինչ երկրորդ կէտին շուրջ չկայ հասարակաց յայտարար և մանաւանդ սփիւռքի մէջ կուսակցութիւններու դերակատարութեան նկատմամբ տեսա-կէտները կ'ապրին մնայուն վերիվայրում մը՝ համաձայն Հայաս-տանի թէ սփիւռքի մէջ ազգային ու քաղաքական պայմաններու փոփոխութեան:

Ինչ կը վերաբերի գաղութներու առանձնաչատուկ իրավիճակ-ներուն, որոնք գաղութ գաղութ զարգացման և փոփոխութեան տարբեր թափեր կը պարզեն, հոս տեղը չէ մանրամասնութիւններու մէջ մտնելու, որովհետև մեր նպատակը ընդհանրական հարցերու շօշափումն է: Միայն հարկ է նշել թէ Հայաստանէն սփիւռք ուղղուող որևէ յարաբերութիւն անհրաժեշտօրէն նկատի պէտք է ունենայ իրաքանչիւր գաղութի իրաչատկութիւնները, որով գնահատելի է այդ իրաչատկութիւններու բնոյթին թափանցելու ճիգը հարցարանը պատրաստողներուն մօտ:⁸

⁷ Պէտք է նշել թէ անհատական նախաձեռնութիւններու այս հակումը կը զարգանայ զուգընթացաբար ներկայակերպական օտարումին. այսինքն այն երևոյթին, երբ տուեալ կազմակերպութեան պատկանող կամ յարող անհատը կ'օտարանայ կազմակերպութենէն շարք մը պատճառներով՝

- Ղեկավարութեան վարած քաղաքականութիւնը (ՀՅԴ),
- Վարքագծային և ռազմավարական փոփոխութիւններ (ՌԱԿ),
- Լնացում կամ պահպանողականութիւն (Հայց. Եկեղեցի),
- «Էլիթիզմ»,
- Հիմնարկայնութիւն. երբ անդամակցային կազմակերպութիւնը փորձ կ'ըլլայ վերածելու հիմնարկի և կամ վարելու այնպէս՝ ինչպէս կը վարուի հիմնարկ մը, վերևէն ներքև կարգադրութիւններով՝ ի հեճուկս ան-դամակցութեան ձգտումներուն և ցանկութիւններուն (ՀԲԸՄ):

⁸ Վահան Փափազեան, Հայաստանի Հանրապետութեան նախկին ար-տաքին գործերու նախարարը, 30 Մարտ 1994-ին կատարած էր հետևեալ հաստատումը. «Որ սփիւռք, որպէս միասնական մի երևոյթ գոյութիւն չունի, դա վաղուց արդէն բոլորին հասկանալի է: ... Ուրեմն Հայաստանի Հանրապետութիւնը պիտի մշակի առանձին քաղաքականութիւն դրանցից ամէն մէկի նկատմամբ»: Կարելի է տեսնել կապը այդ յայտարարութեան և հարցարանի երկրորդ կէտի Բ. հատուածին միջև: Իբրև նախազգու-շացում, սակայն, հարկ է ընդգծել թէ գաղութներու տարբեր իրավիճակ-ներէն մեկնելով տարբեր քաղաքականութիւններու մշակումը պէտք է

3 և 4.- Հայրենիքի և սփիւոքի յարաբերակցութեան բարդ խնդրին մէջ, տեսականօրէն սփիւոքի գոյութիւնը պայմանաւոր է հայրենիքի գոյութեամբ, մինչ հայրենիքը կրնայ գոյութիւն ունենալ առանց սփիւոքի: Սփիւոքը դատապարտուած կ'ըլլայ կորստեան՝ երբ չկայ հայրենիք, կամ կարելի չ'ըլլար վերականգնել երազուած հայրենիքը մինչև աշխարհով մէկ սփռուած ժողովուրդի մը ամբողջական ձուլումը: Կը հետևի թէ հայրենիքն է առաջնային: Բայց այս հետևութիւնը բնաւ չի հակադրուիր այն իրողութեան՝ թէ զօրաւոր սփիւոքով ատէի՛ զօրաւոր է հայրենիքը: Այլ խօսքով՝ եթէ հայրենիքի գոյութիւնը պայմանաւոր չէ սփիւոքի գոյութեամբ, հայրենիքի հզօրութիւնը, սակայն, պայմանաւոր է զօրաւոր սփիւոքով: Եւ փոս է հարցը. այն՝ թէ Հայաստանի Հանրապետութեան վարիչները ի՞նչ կարգի քաղաքականութիւն կ'որդեգրեն սփիւոքի նկատմամբ և այդ քաղաքականութիւնը որքանո՞վ կը նպաստէ կամ կը վնասէ սփիւոքի զօրութեան:

1997-ի Մայիս 5-ին, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը ստորագրած էր հրամանագիր մը՝ Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու համակարգման պետական խորհուրդ ստեղծելու մասին: Այդ հրամանագիրը ցոյց կու տար թէ Հայաստան պահը հասած կը նկատէր պետականօրէն դերակատարութիւն ունենալու «սփիւոքի հարցում»:⁹

Ճառայէ համահայկական ընդհանրակա՛ն նպատակներու իրագործումին՝ գաղութները իրենց զանազանութեան մէջ իսկ դիտելով իբրև մէկ ամբողջութիւն՝ հայրենաբնակ հայութեան հետ: Կայ հայ ժողովուրդի մէկ ամբողջութիւն, իր հայրենաբնակ թէ տարաբնակ զանգուածներով, որուն ամէն մէկ մասնիկին զօրութիւնը լրացուցիչ զօրութիւն է ամբողջութեան համար:

⁹ Ահաւասիկ հրամանագիրին բնագիրը.-

Նկատի ունենալով Հայաստանի անկախութեամբ ստեղծուած նոր իրադրութեան պայմաններում Սփիւոքի հետ յարաբերութիւնների վերամաստատումն և արդիւնաւէտ համագործակցութիւն ապահովող կառուցների ձևաւորման անհրաժեշտութիւնը, և ղեկավարուելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 55 յօդուածի 6-րդ կէտով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել Հայաստան-Սփիւոք յարաբերութիւնների համակարգման պետական խորհուրդ հետևեալ կազմով՝

- Հայաստանի Հանրապետութեան վարչապետ (խորհրդի նախագահ),
- Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարար,
- Հայաստանի Հանրապետութեան կրթութեան և գիտութեան նախարար,

Նորանկախ պետության մօտ այս մտադրությունը նոր չէր: Դեռ Նոյեմբեր 1993-ին արտաքին գործերու նախարար Վահան Փափազեան «Ազատություն» ձայնասփռային կայանի հայկական բաժնին կը յայտարարէր թէ Հայաստանի Հանրապետությունը «սփիտի պետականօրէն զբաղուի սփիտքի հետ իր յարաբերութիւնների կարգաւորմամբ»: Ան նաև կ'աւելցնէր թէ «սփիտքահայութիւն որպէս ամբողջութիւն գոյութիւն չունի», ու կ'եզրակացնէր թէ սփիտքահայ իրաքանչիւր գաղութ, օրինակ՝ Միացեալ Նահանգներու արևմտեան ափի գաղութը, պէտք է ընտրութիւն կազմակերպելով գոյացնէ մարմին մը, որպէսզի Հայաստանի իշխանութիւնները գիտնան թէ որո՞ւ հետ գործ ունին...:

Կ'ուզենք յուսալ թէ այդ թուականէն առդին հայ պետական մտածողութեան մէջ մտած են բարեփոխումներ «սփիտքի հարցով»: Այդ յոյսին առընթեր, սակայն, անհրաժեշտ կը նկատենք կատարել երկու հաստատում.–

ա.– Սփիտքի ուժականութիւնը կախեալ է իր կառոյցներու բազմազանութենէն: Կարևորը և օգտակարը ո՛չ թէ միայն մէկ կառոյց ունենալն է սփիտքի մէջ, այլ՝ բազմազան կառոյցները նպատակներու և ծրագիրներու շուրջ համախմբելը ներկայացուցչական դրութեամբ թէ այլապէս:

բ.– Գոյութիւն ունի մէկ հայ ժողովուրդ, որուն հայրենիքի մէջ և հայրենիքէն դուրս բնակող անհատները կը կազմեն մէկ ամբողջութիւն՝ բաժնելով ազգային մէկ ճակատագիր (ազգային մէկ ճակատագիր բաժնելու յանձնառութիւնը նախապայմանային

Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի, երիտասարդութեան հարցերի և սպորտի նախարար,

Հայաստանի Հանրապետութեան սեփականաշնորհման և օտար ներդրումների նախարար,

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահի տեղակալ,

Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի ղեկավար,

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն:

2. Հայաստան-Սփիտք յարաբերութիւնների համակարգման պետական խորհրդին՝

ա- մեկամտեայ ժամկետում մշակել և հաստատել խորհրդի գործունէութեան աշխատանքային կանոնակարգը,

բ- եռամսեայ ժամկետում Սփիտքի մասնագէտների մասնակցութեամբ մշակել և Հայաստանի Հանրապետութեան նախագահի հաստատման ներկայացնել Հայաստան-Սփիտք յարաբերութիւնների համակարգման և համահայկական հաղորդակցական ցանցի ստեղծման համապարփակ ծրագիրը:

3. Հրամանը ուժի մէջ է մտնում ստորագրման պահից

յատկանիշ է տուեալ ազգութիւնը բաղկացնող անհատներու համար): Բնականաբար տարբեր են աշխարհագրական, քաղաքական, ընկերային, տնտեսական թէ մշակութային այն պայմանները, որոնց ներքև կը կենսագործեն աշխարհացրիւ հայ հաւաքականութիւնները, և իրապաշտ քաղաքական միտք մը այդ պայմաններուն հաշուառումով պէտք է որ վերաբերի անոնց ու մշակէ փոխադարձ կապերը՝ պայմանաւ որ զանոնք իրենց զանազանութեան մէջ իսկ դիտէ իբրև մէկ ամբողջութիւն, և այդ զանազանութիւններուն մէջ միշտ որոնէ ու գտնէ զանոնք միաւորող օղակը: Հակառակը՝ պիտի ըլլար վատառողջ ու ազգավնաս մօտեցում:

Կ'ուզենք տակաւին յուսալ որ Հայաստանի իշխանութիւնները երբ կը մատնանշեն հայութեան այս մասնատուածութիւնը՝ իրենց նպատակն է միաւորող օղակին ամրապնդումը և ո՛չ թէ հայութեան ամբողջականութեան գաղափարին ջրումը: Եւ կ'ուզենք յուսալ, որ սփիւռքի նկատմամբ մշակելի պետական քաղաքականութիւնը կը գծուի հայ ժողովուրդի ամբողջականութեան պրիմակով:

Հարցը նման պրիմակով մը դիտելու պարագային, իտէալական պայմաններու տակ, Հայաստանի պետութեան դերը սփիւռքի հանդէպ պէտք է ըլլայ առաջնորդել զայն և սատարել անոր գոյապահպանութեան:

Երբ կ'ըսենք առաջնորդել, անշուշտ մտահան չենք ըներ այն իրողութիւնը, որ Հայաստանը՝ միջազգային իրաւական ակնոցով դիտուած՝ իրաւասու չէ օտար երկիրներու քաղաքացի սփիւռքահայութիւնը առաջնորդելու: Սակայն Հայաստանը իրաւասու է և պէ՛տք է առաջնորդութիւն տայ աշխարհատարած ՀԱՅութեան՝ իր հայկական ծագումին պահպանման և համահայկական նպատակակէտի մը իրագործման ուղղութեամբ: Որովհետև սփիւռքի հայագաղութները կոչուած են, և ի վիճակի են, կատարելու քայլեր, որոնք մեր ժողովուրդին իրաւունքներուն և շահերուն պաշտպանութեան կը ծառայեն: Պէտք չէ թերագնահատել կարողականութիւնը սփիւռքին, որուն ցաւալի դէպքերու ծնունդ գոյութիւնը առաւելութիւն մըն է մեր ժողովուրդին համար՝ իր պապեճական հայրենիքը շէնցնելու, զարգացնելու և զօրացնելու առումով: Սակայն որպէսզի կարելի ըլլայ օգտուիլ այդ ուժականութենէն, անհրաժեշտ է զայն պահել համախումբ և անոր բոլոր մասնիկները մնայուն կերպով մատակարարել կենսանորոգ աիշով մը, որ ներդաշնակօրէն ու յար յորդի հայրենիքէն և հոսի դէպի հայրենիք: Եւ այդ աիշը մշակութային է առաւելաբար իր բնոյթով:

Ո՛չ հայրենիքը սփիւռքի հաշուոյն, և ո՛չ ալ սփիւռքը՝ հայրենիքի: Այլ՝ իրարու հետ և իրարմով, ծառայելու համար վախճանակէտերու, որոնց առանցքը ընդհանրական հայրենիքն է հայոց՝ յաիտեճական ՀԱՅութեամբ:

Ո՛չ հայրենիքը հակադրուելով սփիւոքին, և ո՛չ ալ սփիւոքը՝ հայրենիքին: Այլ՝ իրարու հետ համախորհուրդ և իրարմէ ներշնչուելով, ծառայելու համար գերագոյն նպատակներու, որոնց հիմնախարհսխը՝ հայոց հայրենիքի ամրապնդման հետ հայ ժողովուրդի տնականացման ու յարատևութեան ապահովումն է ամէնուր: Այս երկուդի կամուրջը հաստատ պահելով հանդերձ, սակայն, իրատեսօրէն պէտք է ընդունիլ որ՝ ինչպէս հայրենիքի առօրեան տնօրինելու պարտքն ու իրաւասութիւնը նա՛խ և առաջ պատասխանատուութիւնն է Հայաստանի պետական մարմիններուն, այնպէս ալ սփիւոքի հայագաղութներու առօրեան տնօրինելու պատասխանատուութեան կոչումած է անոր բազմաբնոյթ կազմակերպութիւններուն ղեկավարութիւնը:

Իսկ այս վերջիններուն պատասխանատուութիւններուն մաս կը կազմէ հայապահպանումի հնոցներուն կանգուն պահպանումը. այլ խօսքով՝ պահպանումը դպրոցներու, մշակութային ու մարզական կեդրոններու, հայ լրագրի և գրականութեան, և դէռ ամէ՛ն բանի, որ գաղթահալը կը կապէ իր արմատներուն և իր հայրենիքին:

* * *

5.- Կենսական պահանջ մըն է Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու ներկայ վիճակի գիտական ուսումնասիրութիւնը: Այդ ուսումնասիրութիւնը ինքնանպատակ չէ, անշուշտ: Ան պէտք է միտի որդեգրումին համազգային նպատակակէտերու և անոնց նուաճումը կարելի դարձնող յարմարագոյն համազգային քաղաքականութեան մը: Եւ քանի որ կը բացակայի նման մօտեցում մը, մեզի համար Հայաստան-սփիւոք յարաբերութիւնները կը ներկայանան պատահական ու անհամակարգ ձևով:

Կենսական է նաև սահմանումը սփիւոք և սփիւոքահայութիւն հասկացողութիւններուն, որովհետև այդ սահմանումներուն թելադրութեամբ միայն կարելի պիտի ըլլայ ճշդել սփիւոքի կարողականութիւնը, և հետևաբար ՀԱՅութեան ամբողջութեան որպէս մաս՝ անկէ ակնկալուած դերակատարութիւնը:

ա.- Սփիւոքը մահացո՞ղ երևոյթ

Յաճախ կը լսենք թէ սփիւոքահայութիւնը մահանալու դատապարտուած ժամանակաւոր երևոյթ է՝ իբրև հետևանք զայն բաղկացնող անհատներու ձուլումին: Այս թէզը հաստատելու համար օրինակներ չեն պակսիր մեր ժողովուրդի պատմութեան մէջ՝ Լեհաստանէն մինչև Ծալրագոյն Արևելք: Նման մօտեցում մը որդեգրելու պարագային, ՀԱՅապահպանութիւն հասկացողութիւնը կ'ընկալուի որպէս սփիւոքահայութիւնը իր ազգային արմատներուն կառչած պահելու ճիգ մինչև այն պահը, ուր ան կը ներգաղթէ իր

հայրենիքը կամ Հայաստան: Բայց ի՞նչ է հայրենիքը և ի՞նչ է Հայաստանը:

Ուշագրաւ է որ հայրենիքի գաղափարը միատեսակ կերպով չի ներկայանար գաղթաշխարհի մէջ: Արևմտահայաստանէն բռնագաղթում հայութեան համար Արևմտահայաստանէն էր հայրենիք, և պոլսահայութեան համար՝ նոյնիսկ Պոլիսը, դարու քսաներեսունական թուականներուն: Ծննդավայրի, յուշերու և զգացական այլևայլ ապրումներու կապով բռնագրաւեալ հողը կը ներկայանար որպէս հայրենիք սփիւոքահայութեան ճնշող մեծամասնութեան համար նոյնիսկ այն շրջանին, երբ Արևելահայաստանի մէջ հռչակուած էր Հայաստանի առաջին Հանրապետութիւնը: Ծիգ պէտք պիտի ըլլար գործադրել սփիւոքի մէջ, որ արևմտահայերէն ոմանք Արևելահայաստանը ընդունին որպէս հայրենիք: Աւելի ուշ, Հայաստանի խորհրդայնացումէն ետք, քաղաքական դրդապատճառներով Դաշնակցութիւնը պիտի յաջողէր իր արևելահայ թէ արևմտահայ հետևորդներուն մէջէն արմատախիլ ընել խորհրդայնացած Հայաստանը ՀԱՅԹԵԱՆ հայրենիք նկատելու ըմբռնումը, մինչ քաղաքական միւս կուսակցութիւնները իրենց հետևորդներուն ընդունիլ պիտի տային թէ խորհրդայնացած Հայաստանը հայրենիքն է ՀԱՅԹԵԱՆ:

Այսօր, երբ գրեթէ անհետացած է իր պապենական հողէն արմատախիլ եղած Եղեռնի սերունդը, նոր սերունդին համար հայրենիք հասկացողութիւնը կը ներկայանայ տարբեր կերպարանքներով:

Միջին Արևելք ծնած երիտասարդ կամ պատանի հայ մը կրնայ տակաւին ըսել թէ իր հայրենիքը Հայաստանն է. բայց Երոպա կամ Ամերիկա ծնած հայուն համար հայրենիք է որոշապէս իր ծննդավայր երկիրը՝ Ֆրանսան, Անգլիան, Միացեալ Նահանգները, ևլն.:

1970-ական թուականներէն սկսեալ Խորհրդային ապա նաև անկախ Հայաստանէն յատկապէս Միացեալ Նահանգներ արտագաղթած հայերու համար Հայաստանը տակաւին ամբողջական հայրենիք է՝ թէ իբրև ծննդավայր և թէ՛ իբրև յուշերու և ապրումներու կծիկ:

Արտաշխարհի մէջ ծնածներէն անոնք, որոնք Հայաստանը կ'ընդունին որպէս հայրենիք, այդ կը կատարեն գաղափարապէս, որովհետև Հայաստանը ծննդավայրը չէ անոնց, և անոնք զգացական կապերով չեն կապուած անոր հետ, ինչպէս կապուած են հոն ծնած հայերը:

Կարելի է, ուրեմն, ըսել թէ Հայաստանը է՝

- Սփիւոքահայուն հայրենիքը ամբողջական առումով. կամ
- Սփիւոքահայուն հայրենիքը գաղափարապէս. կամ

- Սփիոքաֆալուն պատմական հայրենիքը, որուն հետ օտարածին հայր կրնայ զգացական ու գաղափարական կապ ունենալ կամ չունենալ:

բ.- Սփիոքը յաւերժակա՞ն երևոյթ

Կը լսենք նաև թէ սփիոքը, հակառակ արհմահոսութիւններուն, մնայուն երևոյթ մըն է, և թէ սփիոքաֆալութիւնը կրնայ իր հայկական դիմագիծը պահպանել յարատւօրէն:

Տեսականօրէն անկարելի բան չէ սսիկա. սակայն կ'ենթադրէ, իր հերթին, սահմանումը սփիոքաֆալ հասկացողութեան:

Պէտք պիտի ըլլայ ընդունիլ թէ ՀԱՅ-ը և սփիոքաՀԱՅ-ը աշխարհի այլ ազգութիւններէ տարբերակելու համար հարկ է որ-դէգրել իրարմէ տարբեր չափանիշներ:

ՀԱՅ-ը, լայն առումով, հայկական հողի վրայ հայ ծնողներէ սերած, հայերէնով արտայայտուող, հայկական մշակոյթով և բարքերով ապրող և իր հայկական հայրենիքին և ՀԱՅութեան ապագան կերտող անհատն է:

ՍփիոքաՀԱՅ-ը, նուազագոյն առումով, հայ ծնողէ մը սերած այն անհատն է, որ մասնակցութիւն կը բերէ ՀԱՅութեան ապագայի կերտումին: Պայման չէ որ ան կարենայ արտայայտուիլ հայերէնով, կամ ապրի հայկական մշակոյթով ու բարքերով:¹⁰

Տարբեր մօտեցումով մը՝ սփիոքաֆալը այն անհատն է, որ կը գտնուի երեք կարելիութիւններու դէմ յանդիման՝

- Մնալ ՀԱՅութեան և ան-ՀԱՅութեան միջասահմանին.¹¹

¹⁰ Որքան ալ օտարոտի՛ այս տեսակէտը արդիւնքն է երևոյթի մը, որ պարզօրէն 1988-ի երկրաշարժէն ետք: Հայ լեզուէ և ընդհանրապէս հայ միջավայրէ կտրուած ծագումով հայ անհատներ փութացին օգտակար դառնալ հայոց աղիտեալ հայրենիքին, մինչ հայկական միջավայրի մէջ գտնուող հայախօս անձեր բոլորովին կրատրական մնացին կատարուածին հանդէպ, երբ օտարներ իսկ մարդասիրաբար միութեամբ ու բարոյապէս նեցուկ կը կանգնէին աղիտեալ գօտիի բնակչութեան: Բնական եզրակացութիւնը, ուրեմն, պիտի ըլլար ազգային առումով, ՀԱՅութեան ներկային և ապագային նկատմամբ յանձնառու կեցուածք մը հայ ծագումով անհատի մը համար նկատել ԱՆ-ՀԱՅութեան և ՀԱՅութեան ջրբաժան գիծը կամ ազգային պատկանելութեան տարբերակման նուազագոյն նախապայմանը, առաւելագոյնն ըլլալով՝ յիշեալ յանձնառութեան կողքին, լեզուի իմացութիւնը և բոլոր այն միւս յատկանիշները, որ հայը կը դարձնեն ամբողջական հայ: Հոս պէտք է թիրիմացութեանց առաջքը առնելու համար նշել թէ հոգ չէ թէ կրատրական՝ **հայ մնալն** ինքնին օգուտ մը կը նկատենք կրատրական հայէն սերելիքին հասանական գործօնութիւնը նկատի առնելով: Արդէն երազատեսութիւն պիտի ըլլայ ակնկալել որ հայութիւնը կամ որևէ այլ հաւաքականութիւն ամբողջութեամբ ըլլայ գործօն:

¹¹ Միջասահմանի հասկացողութիւնը կ'ենթադրէ սփիոքի հարկադրական

- Վերադառնալ ՀԱՅութեան իր լայն առումով.

- Դիմել դէպի ամբողջական ան-ՀԱՅութին:

**գ.- Սփիւռքի իրարու հակադիր երկու գլխաւոր առանձնա-
յատկութիւնները, երկուքն ալ կիրարկուող իբրև ինքնա-
պահպանութեան միջոց.-**

- Յարմարողականութիւն տուեալ միջավայրի մը և տուեալ պայմաններու:

- Ինքնամփոփում:

Յարմարողականութիւնը կ'ենթադրէ լայնօրէն բացուիլ նոր միջավայրին, հաշտուիլ նոր պայմաններուն հետ՝ ինքնութիւնը կորսնցնելու աստիճան: Նոյնիսկ երբ պետական կամ այլ կարգի հարկադրանքներու ներքև չի գտնուիր գաղութ մը, ան հետզհետէ կը հաշտուի իր կազմակերպութիւններէն, վարժարաններէն ու եկեղեցիէն հայերէնի և հայկականութեան բացակայութեան իրողութեան հետ: Կը հաշտուի, որովհետև իր «ազգային» և եկեղեցական ղեկավարութիւնը կա'մ ոահվիրան կը դառնայ հայկականութեան նուազումին, կա'մ հետևողը զանգուածին մէջ յառաջ եկող նման երևոյթի մը: Հոսանքին դէմ չէ որ կ'երթայ ղեկավարը, այլ՝ հոսանքին հետ:

Ինքնամփոփումը կ'ենթադրէ կղզիացում, որով և փտութիւն: Ինքնամփոփումը կը նուազեցնէ գաղութի մը կարողականութիւնը թէ՛ իր անմիջական միջավայրին մէջ և թէ՛ համահայկական առումով: Ան կ'ունենայ ժամանակաւոր երևութական առաւելութիւններ ազգապահպանական առումով, բայց վերջնական արդիւնքը կը վերածուի ամբողջական ժխտումին նախնական դիտարկութեան:

Առանց այլևս աւելի ծաւալելու, մինչև հոս ըստածէն պարզօրէն կը հետևի թէ ղեկավարումի և առաջնորդութեան հարց է սփիւռքի գոյատևումը և նպատակային օգտագործումը:

* * *

6.- Կու գանք ամենաբարդ հարցին՝ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու նորակերտումին:

գոյացութիւն մը. այսինքն՝ բռնի կամ հարկադրական տեղափոխութիւն մը: Եթէ սփիւռքահայ մը կամաւորապէս կը թողու իր հայրենիքը, կը նշանակէ թէ իր մէջ ուէ անհատի համար բնական տուեալ ազգի պատկանողի և աշխարհաբաղաբացիի պայքարը ասարտած է աշխարհաբաղաբացիութեան յաղթանակով. իբրև մարդ լա'ւ ասրելու (տնտեսապէս, քաղաքականապէս, թէ ընկերային առումով) ձգտումը գերակշիռ դարձած է իբրև ՀԱՅ ասրելու ձգտումին հանդէպ, որովհետև սփիւռքացումը իր մէջ կը կրէ ան-ՀԱՅանալու հունտը:

Ամենաբարձր՝ որովհետև, ինչպես նախորդ պարբերություններում մէջ ջանացինք պարզել, ամէն ինչ փոփոխական է և կարօտ յարատև վերասահմանումի և վերաքննութեան, որքան ալ փոփոխելիներու մէջ այս կամ այն ըլլայ միսէն աւելի երկարակեաց կամ կարճակեաց:

Տունալ հարցին մէջ, երբ կը մտածուի և կը խօսուի յարաբերութիւն ստեղծելու միջոցներու և մեքենականութեան մասին, բարդութիւնը կը ծագի գլխաւորաբար սփիւռքէն, որովհետև Հայաստանը պետական միջոցներով և մեքենայով կը դառնայ մէկ քնեղը այս յարաբերութեան, մինչ միւս քնեղը մինչև օրս զուրկ է կեդրոնացեալ և միահասցէ միջոցներէ ու մեքենայէ՝ իր մասնատուածութեան պատճառով:

Իսկ երբ հարցը դիտենք իր ամբողջութեան մէջ և պահ մը ենթադրենք թէ Հայաստան-Սփիւռք յարաբերութեան հիմնական խնդիրը պէտք է ըլլայ ընդհանրական հայութեան պահպանումը, զարգացումը և շահերուն հետապնդումը, անմիջապէս կը դիմագրաւենք հետևեալ հարցը: Կայ հայութիւն մը, որ ամբողջութիւնն է Հայաստանի և սփիւռքի մէջ բնակող հայերու: Այս ամբողջութեան մէջ Հայաստանը, թէև մեծակշիռ, մաս է սփիւռքի զանազան տարողութիւններով մասերուն նման: Ինչպէս որ սուրիահայ գաղութի հալէպահայ համայնքին պատասխանատուները կը հետապնդեն հալէպահայութեան շահերը, այնպէս ալ Հայաստանի պետական մարմինները կը հետապնդեն Հայաստանի շահերը: Հայութեան հարցերն ու շահերը, հետևաբար, աւելի տարողունակ են՝ քան առանձնաբար վերցուած Հայաստանի և սփիւռքեան գաղութներու հարցերն ու շահերը: Հետևաբար, ստեղծելի մեքենան, իր գործունէութեան տարողութեամբ, պիտի ըլլայ Հայաստանի պետական մեքենայէն գերիվեր բան մը...:

Մենք հայութիւնը կը պատկերացնենք մարդկային մարմնի կերպարով: Իւրաքանչիւր անդամ ունի իր իւրայատուկ դերը. անդամները իրենց հրահանգը կը ստանան գլխուղեղէն:

Իւրաքանչիւր գաղութ ունի իւրայատուկ պայմաններ և, հետևաբար, իւրայատուկ դեր. անդամներուն հաւաքական գործունէութիւնը ներդաշնակող և մարմնին առողջ կենսասագործունէութեան ծառայեցնող հրահանգիչ գլխուղեղին բնական տեղն է գլուխը՝ Հայաստան:

Արդ, պատասխանելու համար այն հարցումին թէ ի՞նչ պէտք է ըլլայ ցանկալի վիճակը Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն և թէ ի՞նչ պիտի ըլլան անոր հասնելու նպատակները, խնդիրները, միջոցները և մեքենականութիւնը, նախ պէտք է յստակացնենք թէ ի՞նչ բանի համար պէտք է հաստատուի Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւն մը:

Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնը պէտք է հաստատուի հայրութեան՝ իր հայրենիքին մէջ և իր հայրենիքէն դուրս գոյութեան պահպանումը, զարգացումը և համազգային իտէալներու իրականացումը միասնաբար հետապնդելու նպատակով:

Այս յարաբերութիւնը պէտք է խարսխուի փոխադարձ շահաւետութեան հիման վրայ և թաւալի ՄԷԿ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՄԷԿ ՃԱԿԱՏԱԳԻՐ առանցքին շուրջ իբրև սկիզբ, օր մը թերևս նաև առանցքային դարձնելու համար ՄԷԿ ԱՄԲՈՂԶԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔը մէկ հայրութեան և մէկ ճակատագրի կողքին:

Միջոցները պիտի ըլլան բոլոր այն հայ անհատները և կազմակերպութիւնները, որոնք կը բաժնեն մէկ հայրութեան մէկ ճակատագրի հիմնադրոյթը և յանձնառու կը դառնան այդ ճակատագրի կերտումին՝ համաձայնեցումով նպատակակէտով և դերաբաշխումով:

Այս բոլորը կարելի կրնան դառնալ Հայաստանի պետութեան կողմէ համապատասխան քաղաքականութեան մը որդեգրումով և Հայաստանի թէ սփիւռքի մէջ միտքերու նախապատրաստութեամբ, հասարակաց մտածողութեան մը հետևողակա՛ն դարբնումով:

Անհրաժեշտ պիտի ըլլայ Հայաստանի մէջ ստեղծել միաւոր մը (որ կրնայ իր բաղադրիչ մասերը ունենալ Հայաստանէն դուրս ալ արդի հաղորդակցամիջոցներու բարիքներուն բերումով), որուն գլխաւոր դերակատարութիւնն ըլլայ սփիւռքի հայագաղութներու պայմաններուն ուսումնասիրութիւնը և, ըստ այնմ, համազգային նպատակակէտերու նուաճման գծով անոնց դերակատարութեան վերասահմանումը:

Իհստ օգտակար պիտի ըլլայ այդ միաւորին հսկողութեամբ Հայաստան-Սփիւռք յարաբերութեան և ընդհանրապէս սփիւռքահայ գաղութներու յարափոփոխ իրավիճակներուն ուսումնասիրութեան նուիրում Մասնագիտական պարբերականի մը (թերևս բազմալեզու) հրատարակութիւնը:

Իրենց անվիճելի նպատը պիտի ունենան համահայկական մասնակցութեամբ համապատասխան գիտաժողովներ, նա՛խ սկիզբ դնելու համար գործին և ապա պարբերաբար վերաքննելու կացութիւններն ու ձեռք բերուած արդիւնքները, որպէսզի ըստ այնմ կատարուին նոր յանձնարարութիւններ:

Մեր համոզումով, մասնագիտացեալ կեդրոնական մարմնի մը գոյութիւնը Հայաստանի մէջ և պարբերական գիտաժողովներ, որոնց մասնակցութիւն բերեն մասնագէտներու (քաղաքական, ընկերային, ժողովրդագրական, ազգագրական, հոգեբանական, ևլն-) կողքին սփիւռքի կազմակերպութիւնները կամ կառոյցները ներկայացնող դէմքեր՝ պիտի ըլլան, գէթ սկզբնական շրջանին, յարմարագոյն մեքենականութիւնը ծրագիրը շարժման մէջ դնող:

Հայութիւնը փորձեց Խորհրդային Հայաստանի օրով Մշակութային Կապի Կոմիտէն, որ, անկախաբար իր գործունէութեան շարժառիթ հանդիսացող քաղաքական հաշիւներէն, եղաւ անլի սփիւռքին տուող քան անկէ առնող:

Հայութիւնը նաև փորձեց Հայաստան Համահայկական Հիմնադրամը, որ կերպով մը մանրակերտ նոր մեքենականութիւնն էր Հայաստան-Սփիւռք համակարգեալ յարաբերութիւններուն, և որ եղաւ առանելաբար սփիւռքէն առնող քան անոր տուող:

Ուղին հարթուած է նոր, երկուդի մեքենականութեան, երկուստեք տուող և առնող մեքենականութեան:

Դոկտ. ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ